

# Գագիկ Միրիջանյանի շնորհավորական ուղերձը Սահմանադրության օրվա առթիվ

05.07.2018



Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ, Շնորհավորում եմ բոլորիդ Սահմանադրության օրվա կապակցությամբ: Մեր պետության Մայր օրենքի ընդունումը պատմական նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Այն մեր անկախ պետականության կարևորագույն խորհրդանիշերից է՝ կայունության և երկրի բնականոն զարգացման ապահովման հիմնական երաշխավորներից մեկը:

Սահմանադրության կարևոր առաքելությունը հասարակական համերաշխության ապահովումն է, որին չենք կարող հասնել առանց օրենքի գերակայության և անհատի սահմանադրական իրավունքի պահպանման: Ուստի այսօր, առավել քան երբևէ, հնարավորություն է ընձեռվել բոլորիս կերտելու այն օրենքի երկիրը, որը տարիներ շարունակ երազանք է թվացել: Այժմ մենք դա կարող ենք անել, քանի որ կա և իշխանությունների քաղաքական կամքը, և ժողովրդի անկեղծ ձգտումը:

Մեկ անգամ ևս շնորհավորելով բոլորիս պետական այս կարևոր տոնի առթիվ՝ ցանկանում եմ, որ Սահմանադրությունը մեր երկրում ծառայի քաղաքակիրթ և բարեկեցիկ ապրելակերպին՝ ամրապնդելով հավատը մեր պետականության ապագայի նկատմամբ:

*Հավագույն ցանկություններով՝  
ՀՀ Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյան*